# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Իրավաբանական բաժնի կողմից 2024թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների քաղաքացիների դիմումներին, որոնցում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերվել են պետական այլ մարմինների հետ հարաբերություններում դժգոհությունների, աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի, հարևանային իրավունքի, սեփականության իրավունքի, գույքին պատճառված վնասի, ապահովագրության վերաբերյալ, սոցիալական և բազմաբնույթ այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետի աշխատակազմի իրավասության շրջանակից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ուղղորդվել են համապատասխան ոլորտներ:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, լրագրողների հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին:

❖ Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը, ուսումնասիրվել է մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված 690, համայնքի ղեկավարների կողմից ընդունված 2491 որոշում և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ 2024 թվականի ընթացքում իրավաբանական բաժինն իր աշխատանքներն իրականացրել է լրիվ ծավալով, ուշացած գրություններ և հանձնարարականներ չեն եղել: Ստացել ենք 517 մտից գրություն, ի պատասխան ելք է եղել 472-ը, բաժնի կողմից գրվել է ելից 169 գրություն: Ներքին գրությունների քանակը 5880-ն է

❖ Մարզպետի աշխատակազմին առնչվող հարցերով կազմվել են ՀՀ դատարաններ են ներկայացվել միջնորդություններ, հայցադիմումներ, հայցադիմումի պատասխաններ, բողոքներ:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՔՈՉԱՐՅԱՆ**
**19.02.2025թ.**